

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**«Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին**

ՀՈՂՎԱԾ 1. «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության /2001 թվականի մայիսի 30-ի ՀՕ-193/ օրենքի (այսուհետ՝ օրենք) 18-րդ հոդվածը լրացնել նոր՝ 2.1-ին մասով հետևյալ բովանդակությամբ՝

«2.1. Լիցենզավորման կարգերով լիցենզիայի ներդիրների տրամադրում կարող է նախատեսվել նաև այդ կարգերով սահմանված այլ պահանջների ու պայմանների համապատասխանության համար:»

ՀՈՂՎԱԾ 2. Օրենքի 34-րդ հոդվածը լրացնել նոր՝ 8-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«8. Սույն օրենքով նախատեսված՝ լիցենզիայի գործողության կասեցման վերաբերյալ բոլոր դրույթները չեն տարածվում բարձրագույն մասնագիտական (բակալավր, մագիստրոս) կրթական ծրագրերի իրականացման /բացառությամբ բժշկական բարձրագույն կրթական ծրագրերի/ համար տրված լիցենզիաների գործողության վրա»:

ՀՈՂՎԱԾ 3. Օրենքի 37-րդ հոդվածը լրացնել նոր՝ 13-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«13. Սույն հոդվածի դրույթները, բացառությամբ սույն հոդվածի 8-12-րդ մասերի դրույթների, չեն տարածվում բարձրագույն մասնագիտական (բակալավր, մագիստրոս) կրթական ծրագրերի իրականացման /բացառությամբ բժշկական բարձրագույն կրթական ծրագրերի/ համար տրված լիցենզիաների գործողության վրա:

Սույն հոդվածի 8-12-րդ մասերի դրույթները տարածվում են բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման /բացառությամբ բժշկական բարձրագույն կրթական ծրագրերի/ համար տրված լիցենզիաների գործողության վրա այնքանով, որքանով դրանք կիրառելի են և չեն հակասում «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներին»:

ՀՈՂՎԱԾ 4. Օրենքի 43-րդ հոդվածի երկրորդ մասի աղյուսակի «9. Կրթության բնագավառ» բաժինը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

	Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը	Լիցենզավորող մարմինը	Լիցենզիայի տեսակը	Ոլորտը	Փորձաքննության պահանջ	Մրցութային կարգով	Որակավորման պահանջ	Հաշվետվության պահանջ	
1.	2	3	4	5	6	7	8	9	10
	<b>9. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՐ</b>								
1.	Նախադպրոցական	ԿՄ	Բ	-	-	-	-	<	Վ

	կրթական ծրագրի իրականացում								
2.	Տարրական հանրակրթական ծրագրի իրականացում	ԿՄ	Բ	-	-	-	-	<	Վ
3.	Հիմնական հանրակրթական ծրագրի իրականացում	ԿՄ	Բ	-	-	-	-	<	Վ
4.	Միջնակարգ հանրակրթական ծրագրի իրականացում	ԿՄ	Բ	-	-	-	-	<	Վ
5	Նախնական մասնագիտական /արհեստագործական/ կրթական ծրագրի իրականացում	ԿՄ	Բ	-	-	-	-	<	Վ
6	Միջին մասնագիտական կրթական ծրագրի իրականացում( բացառությամբ բժշկական միջին մասնագիտական կրթական ծրագրի)	ԿՄ	Բ	-	-	-	-	<	Վ
7	Բակալավրի կրթական ծրագրի իրականացում( ( բացառությամբ բժշկական բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրի)	ԿՄ	Բ	-	-	-	-	<	Վ
8	Մագիստրոսի կրթական ծրագրի իրականացում ( բացառությամբ բժշկական բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրի)	ԿՄ	Բ					<	Վ

## ՀՈՂՎԱԾ 5. Անցումային դրույթներ

1. Կրթական ծրագրերի իրականացման համար մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը տրված այն լիցենզիաները, որոնց համար սույն օրենքով առաջանում են նոր պայմաններ և պահանջներ (այդ թվում նաև՝ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերով, բացառությամբ բժշկական բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրի, նախկինում տրված լիցենզիաները), սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո 6-ամսյա ժամկետում ենթակա են վերաձևակերպման: Նշված ժամկետում լիցենզիաները չվերաձևակերպելու դեպքում կրթության պետական կառավարման լիազոր մարմինը դադարեցնում է լիցենզիաների գործողությունը:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նշված ժամկետում լիցենզիաների վերաձևակերպման դեպքում «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով լիցենզիայի վերաձևակերպման համար սահմանված պետական տուրքը չի գանձվում:

ՀՈՂՎԱԾ 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից վեց ամիս հետո»:

**ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻԿ**

**«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ արված առաջարկությունների**

Առարկության, առաջարկության հեղինակը	Առարկության և առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն
1	2	3
<p>ՀՀ կառավարություն</p>	<p>1. «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի /այսուհետ՝ նախագիծ/ վերնագրում անհրաժեշտ է «լրացումներ» բառը փոխարինել «լրացում» բառով, քանի որ նախագծով կատարվում է մեկ լրացում:</p> <p>2. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 23-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտումներ կատարելու համար կիրառվող վարչական տույժի տեսակ են հանդիսանում նախազգուշացումը և տուգանքը: Նկատի ունենալով սույն հոդվածի դրույթները՝ նախագծի 1-ին հոդվածում լրացվող 13.1 /այսուհետ՝ հոդված 13.1/ հոդվածի 1-ին և 3-րդ կետերում անհրաժեշտ է «օրենսդրությամբ սահմանված կարգով» բառերը փոխարինել «օրենքով սահմանված կարգով» բառերով: Հիշյալ առաջարկությունը բխում է նաև ՀՀ Սահմանադրության 83.5 հոդվածի և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներից: Նախագծի 13.1 հոդվածի 5-րդ կետի 4-րդ ենթակետում անհրաժեշտ է «օգտագործման տալու» բառերը փոխարինել «օգտագործման հանձնելու» բառերով՝ նկատի ունենալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի պահանջները:</p> <p>3. «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի /այսուհետ՝ նախագիծ/ վերնագրում անհրաժեշտ է «փոփոխություններ» բառը փոխարինել «փոփոխությունը» բառով, քանի որ նախագծով կատարվում է մեկ փոփոխություն: Նախագծի 3-րդ հոդվածում անհրաժեշտ է «7» թիվը փոխարինել «8» թվով, քանի որ «Լիցենզավորման</p>	<p>Ընդունվել է:</p> <p>Ընդունվել է:</p> <p>Ընդունվել է:</p>

	<p>մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածում 7-րդ մասն առկա է:</p> <p>Նախագծի 4-րդ հոդվածն անհրաժեշտ է խմբագրել, մասնավորապես՝ հոդվածի 2-րդ մասում որպես լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներ նշվում են բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերը, մինչդեռ նախագծի 6-րդ հոդվածի 2-րդ սյունակի 7-րդ և 8-րդ կետերում որպես լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներ առանձին նախատեսված են բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերը:</p> <p>4. «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծում անհրաժեշտ է «8.5.4.» թիվը փոխարինել «8.5.5.» թվով:</p> <p>«Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդվածով նախատեսված փոփոխությունը համարում ենք անընդունելի, քանի որ լիցենզավորման համար անհրաժեշտ տվյալները հասկացությունը հստակ չի սահմանում, թե կոնկրետ ինչ տվյալների մասին է խոսքը: Այս կապակցությամբ հայտնում ենք, որ լիցենզավորման համար անհրաժեշտ տվյալներն օրենքով հստակ կերպով չսահմանելը կարող է հայտատուների համար ավելորդ քաշքշուկների տեղիք տալ: Տվյալ մոտեցումը հակասում է Հայաստանի Հանրապետության կառավարության որդեգրած լիցենզավորման գործընթացի հստակեցման և պարզեցման մոտեցմանը:</p>	<p>Ընդունվել է:</p>
--	--	---------------------